

Ի. ԱՏՎԵԼԻՆ

ՏԵՏԵՍԱՎԱՐՆԵՐԻ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ Ե Տ Հ Հ Ա Տ
ԹԵՐԵՎԱՆ 1932

482

3069

Ի. ԱՏՎԼԻՆ

ՏՆՏԵՍԱՎԱՐՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽՈՑԻԱՀԻՍՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱ-
ՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ
ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՐՏԱՍՏԱՆԾ ՃԱՌԸ

ՅԵՐՔՐՈՐԴ ԻՐԱՄԱՐԱԿՈՒՐՅՈՒՅ

Գ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ա Կ Ի Թ Ց Ո Ւ Ր

ՅԵՐԵՎԱՆ—1932

Գետհրատի ապարան
Դլավլիս 71+1 (բ)
Հրատար. № 2064
Պատվեր № 458
Տիրաժ 20.000



3069-Ա9-2

— Բնկերներ, ձեր կոնֆերենցիայի աշխատանքները գերջանալու վրա յեն: Հիմա դուք բանաձեվեր եք ընդունեցու: Ձեմ կասկածում, վոր կնդունվեն միաձայն: Այդ բանաձեկրում—յես մի քիչ ծանոթ եմ դրանց—դուք հավանություն եք տալիս արդյունաբերության 1931 թվականի կոնտրոլ թվերին և պարտավորություն եք ստանձնում կատարել Ձերջիններս:

Բայլշեիկի խոսքը լուրջ խոսք ե: Բայլշեկները սովոր են կատարել իրենց տված խոստումները: Սակայն ի՞նչ ե նշանակում պարտավորվել կատարելու 1931 թվականի կոնտրոլ թվերը: Այդ նշանակում ե ապահովել արդյունաբերության արտադրանքի ընդհանուր աճը 45 տոկոսով: Իսկ դա շատ մեծ խնդիր ե: Դեռ ավելին: Այդպիսի պարտավորություն ստանձելով, դուք վոչ միայն խոստում եք տալիս կատարել մեր 5-ամյակը 4 տարում,—այդ արգեն վճռված գործ է, և այստեղ վոչ մի բանաձև հարկավոր չե այլև,— դա նշանակում ե, վոր դուք խոստանում եք արդյունաբերության հիմնական, վնասական նյուղերում հնգամյակը կատարել 3 տարում:

Լավ ե, վոր կոնֆերենցիան խոստանում ե կատարել 1931 տարվա պլանը, կատարել հնգամյակը յերեք տարում: Սակայն մենք «դառն փորձով» սովորել ենք: Մենք դիտենք, վոր խոստումները վոչ միշտ են կատարվում: 1930 թվի ըսկդրին նույնպես այդպիսի խոստում եր արվել՝ կատարել տարեկան պլանը: Այդ ժամանակ հարկավոր եր ավելացնել մեր արդյունաբերության արտադրանքը 31-32 տոկոսով: Սակայն խոստումը լրիվ չկատարվեց: 30 թվականին արդյունաբերության արտադրանքն իրականում ավելացավ 25 տոկոսով: Մենք պետք ե հարց տանք, թե նույնը չի՞ կրկնվի արդյուքնակ այս տարի: Մեր արդյունաբերության դեկավարներ,

աշխատողներն այժմ խոստանում են 1931 թվականին ար-
դրունաբերության արտադրանքն ավելացնել 45 տոկոսով :
Սակայն ի՞նչ յերաշխիք, վոր խոստումը կետառարվի :

Ի՞նչ և պետք ստուգիչ թվերը կատարելու, արտադրանքը
45 տոկոսով ավելացնելու, հնդամյակը վոչ թե 4 տարում,
այլ հիմնական և վճռական ճյուղերում 3 տարում կատարե-
լու համար :

Դրա համար անհրաժեշտ է 2 հիմնական պայման :

Նախ պետք ե վոր գոյություն ունենան ունակ, կամ ինչ-
պես ասում են մեղանում՝ «որյեկտիվ» հնարավորություն-
ներ դրա համար :

Յերկրորդ՝ անհրաժեշտ է, վոր ցանկություն և հըմ-
տություն լինի կառավարելու մեր ձեռնարկություններն
այնպես, վոր այդ հնարավորություններն իրականության
դառնան :

Անցյալ տարի մենք «որյեկտիվ» հնարավորություններ
ունեյինք պլանը լրիվ կատարելու համար : Այս՝ կային շ-
ղավածելի փաստերը այդ մասին են վկայում : Այդ փաստերն
են հետևյալները . անցյալ տարվա մարտին ե ապրիլին ար-
դյունաբերության արտադրանքը՝ նախորդ տարվա հետ-
համեմատած, այլելացավ 31 տոկոսով : Հարց ե ծաղում,
ինչո՞ւ չկատարեցինք մեր ամբողջ տարվա պլանը : Ի՞նչը
խանդարեց : Ի՞նչն եր պակասում : Պակասում եր գոյուրյուն
ունեցազ հեարավորությունները սգտագործելու հմտություն :
Պակասում եր գործարանները, փաբրիկներն ու հանքերը
հիշտ դեկավարելու հմտությունը :

Մենք ունեյինք առաջին պայմանը՝ «որյեկտիվ» հնա-
րավորություններ պլանը կատարելու համար : Սակայն մենք
չունեյինք անհրաժեշտ չափով յերկրորդ պայմանը՝ արտա-
դրությունը զեկավարելու հմտություն : Հենց այն պատճա-
ռով, վոր պակասում եր ձեռնարկությունները զեկավարե-
լու հմտություն, —հենց այդ պատճառով պլանը թերակա-
տար մնաց : 31-32 տոկոսի աճի փոխարեն մենք տվինք միայն
25 տոկոս :

4

Իհարկե, 25 տոկոսի աճը մեծ դործ է : Կապիտալիս-
տական և վոչ մի յերկիր 1930 թվականին չի ունեցել և հի-
մանականի արտադրանքի ան : Կապիտալիստական բոլոր
յերկրներում, առանց բացառության, տեղի ունի արտա-
դրության խիստ անկում : Այդպիսի պայմաններում 25 տո-
կոսի անը մեծ առաջ քայլ է : Սակայն մենք կարող ենք ա-
վելին տալ : Մենք ունեյինք դրա համար անհրաժեշտ բոլոր
«որյեկտիվ» պայմանները :

Ուրեմն, ինչովիսի յերաշխիք, վոր այս տարի չի կրկնվի
անցյալ տարվա դեպքը, վոր պլանը լրիվ կկատարվի, վոր
գոյություն ունեցող հնարավորությունները մեր կողմէից
կողտադրծվեն այնպես, ինչպես հարկավոր ե ոգտագործել
նրանց, վոր ձեր խոստումը վորոշ չափով թղթի վրա չմնու :

Գետությունների պատմության մեջ, յերկրների պատմու-
թյան մեջ, բանակների պատմության մեջ, դեպքեր են յեզել,
յերթ գոյություն են ունեցել հաջողություն, հաղթելու բո-
լոր հնարավորությունները, սակայն դրանք, այդ հնարա-
վորությունները ապարդյուն են մնացել, վորովհետեւ դեկա-
վարները չեն նկատել այդ հնարավորությունները, չեն կա-
րողացել ոգտվել նրանից, և բանակները պարտություն են
կրել :

1931 թվականի ստուգիչ թվերը կատարելու բոլոր հնա-
րավորություններն ունենք արդյոք մենք :

Այս՝ այդպիսի հնարավորություններ ունենք :

Վորո՞նք են այդ հնարավորությունները, ի՞նչ և պա-
հանջվում այդ հնարավորություններն իրականություն
դարձնելու համար :

Նախ և առաջ անհրաժեշտ են բավարար չափով քնական
ֆարսուրթյուններ յերկրում՝ յերկաթահանք, ածուխ, նավթ,
հաց : Կա՞ն արդյոք նրանք մեզանում : Կա՞ն : Ավելի կան, քան
վորեւ այլ յերկրում : Վերցնենք թեկուզ Ուրալը, վոր ներ-
կայացնում ե հարստությունների այնպիսի կոմբինացիա,
վորպիսին չի կարելի գտնել վոչ մի յերկրում : Հանք, ա-

5

ծուի, նավթ, հաց, — բնչ ասեմ չկտ Ուրալում։ Մեղանում
ամեն ինչ կա յերկում, բացի միայն կառւչուկից։ Սակայն
մի-յերկու տարուց մենք կառւչուկ ևս կունենանք մեր տրա-
մադրության տակ։ Այդ կողմից, բնական հարստություն-
ների կողմից, մենք լիովին ապահովված ենք։ Նրանք մեզա-
նում նույնիսկ ավելի յեն, քան անհրաժեշտ ե։

Ել ի՞նչ ե պահանջվում։

Պահանջվում ե, վոր լինի այնպիսի իշխանություն, վորը
ցանկություն և կարողություն ունենա ոգտագործել բնա-
կան այդ հսկայական հարստությունները ժողովրդի ոգտին։
Կա՞ արդյոք մեզանում այդպիսի իշխանություն։ Կա՛ ծիշտ
ե, բնական հարստությունների ոգտագործման առարկուամ-
մեր աշխատանքը վոչ միշտ տեղի յե ունենում առանց բաղ-
խուանների։ մեր իսկ աշխատողների միջնվ։ Որինակ՝ անցյալ
տարի խորհրդային իշխանությունը հարկադրված եր վորոշ
պայքար մղել ածխա-մետաղածուլական յերկրորդ բաղա-
ստեղծելու հարցի վերաբերյալ, մի բաղա, առանց վորի մենք-
չենք կարող այլևս դարձանալ։ Սակայն մենք հաղթահարել
ենք արդեն այդ արդելքները։ Յեկ մեզանում շուտով կինէ-
այդ բաղան։

Ել ի՞նչ ե պահանջվում։

Պահանջվում ե նաև, վոր այդ իշխանությունը վայելի-
միլիոնավոր բանվորների և գյուղացիների սժանդակու-
թյունը։ Մեր իշխանությունը վայելում ե արդյոք արդպիսի
ոժանդակությունը։ Այո՛, վայելում ե ։ Դուք ամբողջ աշխար-
հում չեք գտնի մի այլ այդպիսի իշխանություն, վորը վա-
յելեր բանվորների և գյուղացիների այդպիսի ոժանդակու-
թյունը, վոր վայելում ե խորհրդային իշխանությունը։
Յես չեմ հենվի սոցիալիստական մըցության աճման փաս-
տերի վրա, հարվածայնության աճման փաստերի վրա, հան-
դիպական արդֆինալլանի համար մղվող պայքարի կամպա-
նիայի վրա։ Այդ բոլոր փաստերը, վորոնցից ակնբախ կեր-
պով յերկում ե միլիոնավոր մասսաների անվերատահ ոռ-

ժանդակությունը խորհրդային իշխանությանը, հանրածա-
նոթ են։

Ել ի՞նչ ե պետք 1931 թվականի ստուգիչ թվերը կատա-
րելու և գերակատարելու համար։

Անհրաժեշտ ե նաև այնպիսի իրավակարգի առկայու-
թյուն, վորն ազատ լիներ կապիտալիզմի անբուժելի հիման-
դություններից և վորը լուրջ առավելություններ ունենաք-
իապիտալիզմի հանդեպ։ Ճգնաժամեր, գործադրկություն-
շույլություն և լայն մասսաների աղքատություն-
ահա կապիտալիզմի անբուժելի հիվանդությունները։ Մեր
իրավակարգը չի տառապում այդ հիվանդություններով,
վորովհետեւ իշխանությունը մեր ձեռին ե, բանվոր դասա-
կարգի ձեռին, վորովհետեւ մենք վարում ենք պլանային
տնտեսություն, պլանաշափ կուտակում ենք ուսուրաները և
նրանց պլանաշափ բաշխում ենք բայ ժողովրդական տըն-
տեսության ճյուղերի։ Մենք ազատ ենք կապիտալիզմի ան-
բուժելի հիվանդություններից։ Դրանումն ե մեր տարբե-
րությունը, դրանումն ե մեր վճռական առավելությունը
կապիտալիզմի հանդեպ։ Տեսեք, թե ինչպես են ուզում դուրս
գալ կապիտալիստները ճգնաժամից։ Նրանք առավելադույն
չափով իշեցնում են բանվորների աշխատավարձը։ Նրանք
մեծ չափով իշեցնում են հումույթի և պարենավորման
մթերքների գինը։ Բայց նրանք չեն ուզում քիչ թե շատ
նկատելի չափով իշեցնել արդյունաբերական ապրանքների
գները։ Այդ նշանակում ե, վոր նրանք ուզում են ճգնաժամից
դուրս գալ ապրանքների հիմնական սպառողների հաշվին։
բանվորների հաշվին, գյուղացիների հաշվին, այն յերկրնե-
րի աշխատավորների հաշվին, վորոնք արտադրում են հու-
մույթ և կենսամթերքներ։ Կապիտալիստները կտրում են
այն ճյուղը, վորի վրա նստած են։ Յեկ ճգնաժամից դուրս
գալու փոխարեն նա ավելի յե սաստկանում, կուտակվում
են դեպի նոր, ալելի գաժան ճգնաժամ տանող նոր նախա-
դըրյաններ։ Մեր առավելությունն այն ե, վոր մենք չդիտենք
գերատադրության ճգնաժամներ, մենք չունենք և չենք ու-

նենա միլիոնավոր գործազուրկներ, մենք անարխիա չունենք արտադրության մեջ, վորովհետև մենք վարում ենք պլանային տնտեսություն։ Սակայն այդ դեռ բոլորը չեն։ Մենք հանդիսանում ենք ամենից համակենտրոնացած արդյունաբերություն ունեցող յերկիրը։ Այդ նշանակում են, վոր մենք կարող ենք մեր արդյունաբերությունը հիմնել ամենալավ տեխնիկայի վրա և դրա նորհիվ առահովել աշխատանքի չտեսնված արտադրողականություն, կուտակման չտեսնված տեսակ։ Անցյալում մեր թուլությունն այն եր, վոր այդ արդյունաբերությունը հիմնված եր բաժան-բաժան, մանր-գյուղացիական տնտեսությունների վրա։ Սակայն այդ առաջ եր։ Այժմ արդեն չկա այդ։ Վաղը, թերեւ մի տարուց, մենք կզառնանք աշխարհիս ամենախոչըն գյուղատնտեսական յերկիրը։ Մեր խորհանտեսություններն ու կոլտնտեսությունները — իսկ գրանք խոչը տնտեսության ձևերն են — արդեն այս տարի տվյան մեր ամրոջ ապրանքային հացածատիկի կեսը։ Իսկ այդ նշանակում են, վոր մեր հասարակարգը, խորհրդային հասարակարդը, արագորեն առաջ գնալու այնպիսի հնարավորություններ ե տալիս մեզ, վորոնց մասին չի կարող յերազել բուրժուական և վոչ մի յերկիր։ Ել ի՞նչ ե պահանջվում հակայի քայլերով առաջ գնալու համար։

Պահանջվում ե մի այնպիսի կուսակցություն, վորը բավականաչափ համախմբված և միասնական լինի, վորպեսզի բանվոր դասակարգի բոլոր լավագույն մարդկանց ջանքերը ուղղի մի կետի վրա և բավականաջափ վորձված լինի, վորպեսզի չլհատի գժվարությունների առաջ և սիստեմատիկորեն իրագործի ճիշտ, հեղափոխական, բայլչեիկյան քաղաքականությունը։ Կա՞ արդյոք մեզանում այլպիսի կուսակցություն։ Այո՛, կա։ Ճիշտ ե արդյոք նրա քաղաքականությունը։ Այո՛, ճիշտ ե, վորովհետև նա լուրջ հաջողություններ ունի։ Այդ խոսքովանում են այժմ վոչ միայն մեր բարեկամները, այլև բանվար դասակարգի թշնամիներ։ Տեսեք, մեկ ինչպես վայնաբույն են բարձրացնում և կա-

տաղում մեր կուսակցության դեմ հանրածանոթ «Հարգո» ջենալյեններ՝ Ֆիշը՝ Ամերիկայում, Զերչիլը՝ Անդիխայում, Պուտառարեն՝ Ֆրանսիայում։ Ինչո՞ւ յն նրանք վայնասուն բարձրացնում ե կատաղում։ Վորովհետև մեր կուսակցության քաղաքականությունը ճիշտ ե, վորովհետև նա նորանոր հաջողություններ ե ունենում։

Ահա՛, ընկերներ, այն բայր հնարավորությունները, վորոնք հետացնում են 1931 թվի սոսուզիչ թվերի իրագործումը, վորոնք հնարավորություն են տալիս հնդամյակը կատարել չորս, իսկ վճռական ձյուղերում — նույնիսկ 3 տարում։

Այսպիսով, պլանի կատարման համար առաջին պայմանը — «որյեկտիվ հնարավորություններ» — մենք ունենք։

Կա՞ արդյոք մեզանում յերկրորդ պայմանը — այդ հնարավորություններն ոգտագործելու հմտությունը։

Ուրիշ խոսքով, մեզ մոտ կա՞ գործարանների, Փարբիկանների, հանքերի ճիշտ զեկավարություն։ Արդյո՞ք ամեն ինչ բարեհաջող ե այստեղ։

Դժբախտաբար, այստեղ վոչ ամեն ինչ բարեհաջող է։ Յեկ մենք, վորպես բայլչելիներ, ուղղակի և բացարձակ պետք ե ասենք այդ։

Ի՞նչ ե նշանակում զեկավարել արտադրությունը։ Մեզ մոտ վոչ միշտ բայլչելիներն են նայում ձեռնարկությունների զեկավարության հարցի վրա։ Մեզ մոտ յերբեմն կարծում են, վոր զեկավարել նշանակում ե թղթեր ստորագրել։ Դա ցալվալի յե, բայց դա փաստ է։

Յերբեմն ակամա հիշում ես Շչեդրինի պոմպաղուճերին։ Հիշում եք, ինչպես պոմպաղութուհին խրատում եր ջահել պոմպաղութին — զլուխոդ մի՛ ցալացնի գիտության վրա, մի թափանցի գործի խորքերը, թող ուրիշները զբաղվեն դրանով, զա քո գործը չե, — քո գործն ե զեկավարել, թղթեր ստորագրել։ Պետք ե խոստովանել, ամոթ մեզ, վոր մեզ՝ բայլչելիներին մեջ ել քիչ չեն այնպիսիները, վո-

րոնք զեկտվարում են թղթեր ստորագրելու միջոցով։ Իսկ գործի խորքը թափանցել, տիրապետել տեխնիկային, գործի տեր դառնալ, — այս կողմից չեւ։

Ի՞նչպես կարող եր պատահել, վոր մենք, բայց և ինքներս, վոր կատարել ենք յերեք հեղափոխություն, հաղթանակով դուրս ենք յեկել քաղաքացիական դաժան պատերազմից, լուծել ենք արդյունաբերություն ստեղծելու խոշորագույն խնդիրը, գյուղացիությունը շրջել ենք դեպի սոցիալիզմի ուղին, — ի՞նչպես կարող եր պատահել, վոր արտադրության ղեկավարության գործում թղթերով ենք բավականանում։

Այստեղ պատճառն այն է, վոր թուղթ ստորագրելն ավելի հեշտ է, քան արտագրություն ղեկավարելը։ Յեվ ահա շատ տնտեսավարներ գնացին այս ամենաքիչ դիմագրության գծով։ Այստեղ կա նաև մեր մեղքը, կենտրոնի մեղքը։ Տասը տարի առաջ տրվեց մի լողունդ. «Քանի վոր կոմունիստները դեռևս ինչպես հարկն ե չեն հասկանում արտադրության տեխնիկան, քանի վոր նրանք դեռ կարիք ունեն սովորելու տնտեսություն ղեկավարելը, թող հին տեխնիկներն ու ինժեներները, մասնագետները վարեն արտադրությունը, իսկ գուք, կոմունիստներդ, մի խառնվեք գործի տեխնիկային, բայց չմիջամտելով, ուսումնասիրեցեք տեխնիկան, առանց ձեռները ծալելու ուսումնասիրեցեք արտադրության կառավարման տեխնիկան, վորպեսզի հետո մեր նվիրված մասնագետների հետ միասին դառնաք արտադրության խկական ղեկավարներ, գործի խկական տերեր»։ Այսպես եր լողունդը։ Իսկ ի՞նչ ստացվեց իրականում։ Այս Փորմուլայի յերկրորդ մասը դեն շպրտեցին, վորովհետեւ սովորելն ավելի դժվար է, քան թղթեր ստորագրելը, իսկ Փորմուլայի առաջին մասը գուեկացրին, չմիջամտելը բացարելով վորպես Հրաժարում արտադրության տեխնիկան ուսումնասիրելուց։ Ստացվեց անհեթեթություն, վնասակար, վտանգավոր անհեթեթություն, վորից վորքան շուրջադարձ չաղախովեցին։ Ժամանակ ե, վաղուց ժամանակ ե, վոր այդ գործն անբարեհաջող է։ Առաջին աղղանշանն եր Շախտիկ գործը։ Շախտիկ գործը ցույց տվեց, վոր կուսկաղմակերպությունները և արհմիությունները հեղափոխական բավականաշափ զդոնություն չեն ունեցել։ Նա ցույց տվեց, վոր մեր տնտեսավարները տեխնիկական տեսակետից չափազանց հետ են մնացել, վոր մի քանի հին ինժեներներ և տեխնիկներ, առանց վերահսկողության աշխատելով, ավելի գյուրությամբ են գլորվում դեպի վնասարարության ուղին, մանավանդ, վոր շարունակ արտասահմանի մեր թշնամիները «գայթակղեցնում» են նրանց իրենց «առաջարկներով»։ Յերկրորդ աղղանշանն «Արդյունաբերական կուսակցության» պրոցեսն եր։

Իհարկե, վնասարարության հիմքն ե կաղմում դասակարգային պայյքարը։ Իհարկե, դասակարգային թշնամին կատաղի դիմագրություն ե ցույց տալիս սոցիալիստական Հարձակմանը։ Սակայն վնասարարության այդպիսի փարթամ ծաղկումը բացատրելու համար միայն այդ բացատրությունը քիչ է։

Ի՞նչպես կարող ե պատահել, վոր այդպիսի լայն չափեր ե ընդունել վնասարարությունը։ Ո՞վ ե մեղավոր դրանում։ Դրանում մենք մեղավոր ենք։ Յեթե մենք տնտեսության ղեկավարումն այլ հիմքերի վրա դրած լինելինք, յեթե մենք ավելի ջանք գործադրած լինելինք տեխնիկան ուսումնասիրելու, տեխնիկային տիրապետելու գործի վրա, յեթե մենք ավելի հաճախ և ավելի խելացի կերպով միջամտելինք տընտեսության ղեկավարմանը, — վնասարարներին չեր հաջողվի այդքան վնաս տալ։

Պետք է, վոր մենք ինքներս մասնագետ դառնանք, գործի տե՛ր, պետք ե յերեսով շուրջ դեպի տեխնիկական գիտելիքները — ահա թե ուր ե մղել մեզ կյանքը։ Սակայն վոչ առաջին, վոչ ել յերկրորդ աղղանշանը, դեռ անհրաժեշտ չմիջադարձ չաղախովեցին։ Ժամանակ ե, վաղուց ժամանակ

« յերեսը չուռ տալ գեղի տեխնիկան։ Ժամանակ և դեռ
շարտել հին լողունգը, մեռած լողունգը՝ տեխնիկային
շառանվելու ժամին, և ինքներս դառնանք մասնավետներ,
գործի հմուտներ, ինքներս դառնանք գործի լիակատար
տերը։

Հաճախ հարցնում են, ինչո՞ւ չկա մեղանում միանձնյա
ղեկավարություն։ Նա չկա և չի կարող լինել, մինչև վոր
մենք չտիրապետենք տեխնիկային։ Մինչև վոր մեր մեջ,
բայց լիկների մեջ չինք տեխնիկայի, եկոնոմիկայի և ֆի-
նանսների հարցերին լավ ծանոթ բավարար թվով մարդիկ,
մեղանում իսկական միանձնյա զեկավարություն չի լինի։
Վորքան ուղեք բանաձեռք դրեք, ինչ իսոսքերով ուղում եք
յերգվեցեք, բայց յեթե չտիրապետեք գործարանի, ֆար-
մեկի, հանքահորի տեխնիկային, եկոնոմիկային և ֆինանս-
ներին — բան դուքս չի գա, միանձնյա զեկավարություն չի
լինի։

Հետևապես խնդիրն այն է, վոր մենք ինքներս տիրապե-
տենք տեխնիկային, ինքներս դառնանք գործի տերը։ Մի-
միայն այդ և յերաշխիք տալիս, վոր մեր պլանները լիովին
կիրագործվեն և միանձնյա զեկավարությունը կկենսա-
գործվի։

Իհարեւ, զա հեշտ գործ չե, սակայն միանդամայն հաղ-
թահարելի։ Գիտությունը, տեխնիկական փորձը, գիտելիք-
ները — այս բոլորը հնարավոր և ձեռք բերել աշխատանքով։
Այսոր չկա, վազը կլինի։ Այստեղ գլխավորն այն է, վոր
մենք բայց կիյան բուռն ցանկություն ունենանք տեխնի-
կային տիրապետելու, արտադրության գիտությունը նվա-
ճելու։ Բուռն ցանկություն ունենալով, կարելի յե հասնել
ամեն ինչի, կարելի յե հաղթահարել ամեն ինչ։

Յերեմին հարցնում են, թե չի՞ կարելի արդյոք մի քիչ
շանդաղեցնել տեմպը, թուլացնել շարժումը։ Վո՞չ, ընկեր-
ներ, չի՞ կարելի։ Չի՞ կարելի թուլացնել տեմպը։ Ընդհա-
պատմին՝ ըստ մեր ուժերի և հնարավորությունների, պետք
է առիլացնել զրանք։ Այդ են պահանջում ԽՍՀՄ-ի բան-

վորների և գյուղացիների հանդեպ մեր ստանձնած պարտա-
վորությունները։ Այդ են պահանջում մեզանից ամբողջ աշ-
խարհի բանվոր դասակարգի առաջ մեր ստանձնած պարտա-
վորությունները։

Դանդաղեցնել տեմպը — այդ նշանակում է հետ մնալ։
Իսկ հետ մնացողներին խփում են։ Սակայն մենք չենք ու-
զում, վոր մեղ խփեն։ Վո՞չ, չենք ուզում։ Հին Ռուսաստա-
նի պատմությունն ի միջի այլոց այն է, վոր նրան անընդ-
հատ խփում եյին հետամնացության համար։ Խփում եյին
ժոնդոլական խաները։ Խփում եյին թրքական բեկեքը։ Խփում
եյին չվեղական ֆեոդալները։ Խփում եյին լեհ-լիտվական-
պաները։ Խփում եյին անդլո-ֆրանսական կապիտալիստ-
ները։ Խփում եյին յապոնական բարոնները։ Ամենքը խփում
եյին հետամնացության համար։ Ռազմական հետամնացու-
թյան համար, կուլտուրական հետամնացության համար,
պետական հետամնացության համար, արդյունաբերական
հետամնացության համար, գյուղատնտեսության հետա-
մնացության համար։ Խփում եյին, վորովհետեւ այդ ձեռլի-
տու յեր և անպատճի եր անցնում։ Հիշո՞ւմ եք մինչհեղա-
փոխական բանաստեղծի հետեւյալ խոսքերը։ «Դու և՛ իսեղ-
ես, և՛ լիառատ, դու և՛ հզոր ես, և՛ անզոր ես, մայր իմ
Ռուսիա»։ Հին բանաստեղծի այս խոսքերը լավ են սովորել
այդ պարունները։ Նրանք խփում եյին և ավելացնում։ «Դու
լիտուատ ես»—ուրեմն կարելի յե ողտպել քեզանից։ Նրանք
խփում եյին և ավելացնում։ «Դու խեղճ ես և անզոր», ուրեմն
կարելի և խփել և անպատճի կողոպտել։ Այդպես և արդեն
շահագործողների որենքը՝ խփել հետամնացներին և թույլե-
րին։ Կապիտալիզմի զայլի որենք։ Դու հետ ես մնացել, դու
թույլ ես — նշանակում ե դու արդարացի չես, հետևապես
քեզ կարելի յե խփել և սորկացնել։ Դու հզոր ես — նշա-
նակում ե դու արդարացի յես, հետևապես քեզնից պետք ե
զդուչ լինել։

Ահա թե ինչու մեղ չի կարելի այլևս հետ մնալ։

Անցյալում մենք հայրենիք չունեյինք և չեյինք կարող

ունենալ: Բայց այժմ, յերբ մենք տապալել ենք կապիտալիզմը, իսկ մեղանում իշխանությունը բանվորական է, մենք հայրենիք ունենք, և մենք կտրաշտպանենք նրա անկախությունը: Ուզո՞ւմ եք, վոր խփեն մեր սոցիալիստական հայրենիքն և վոր նա կորցնի իր անկախությունը: Յեթե այդ չեք ուզում, դուք պետք ե ամենակարճ ժամանակամիջոցում վերացնեք նրա հետամիացությունը և խսկական բայլը կիյան տեմպ կիրառեք նրա սոցիալիստական տնտեսության շինարարության գործում: Այլ ճանապարհներ չկան: Ահա թե ինչու լենինը Հոկտեմբերի ժամանակ ասում եր. «Կամ մահ, կամ հասնել և անցնել կապիտալիստական առաջավոր յերկրներից»:

Ի՞նք 50—100 տարով հետ ենք մնացել առաջավոր յերկրներից: Այս տարածությունը մենք պետք ե կտրենք ասս տարում: Կամ կանենք այդ, կամ մեզ կճգմեն:

Ահա թե ինչ ե թելադրում մեզ ԽՍՀՄ-ի բանվորների և գյուղացիների՝ հանդեպ մեր ստանձնած պարտավորությունը:

Սակայն մենք ունենք ուրիշ, ավելի լուրջ և ավելի կարևոր պարտավորություններ: Դրանք համաշխարհային պրոլետարիատի առաջ մեր ստանձնած պարտավորություններն են: Նրանք զուգադիպում են առաջին տեսակի պարտավորությունների հետ: Սակայն նրանց մենք ավելի բարձր ենք դասում: ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը համաշխարհային բանվոր դասակարգի մի մասն է: Մենք հաղթեցինք վոչ միայն ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի ջանքերով, այլև չնորդիլ համաշխարհային բանվոր դասակարգի ոժանդակության: Առանց այդ ոժանդակության վաղուց բղկտած կլինելին մեղ: Ասում են, թե մեր յերկիրը բոլոր յերկրների պրոլետարիատի հարվածային բրիգադն ե: Այդ լավ ե ասված: Բայց դա մեղ վրա լուրջ պարտավորություններ և դնում: Հանուն ինչի՞ յե պաշտպանում մեղ միջազգային պրոլետարիատը, ինչո՞վ ենք արժանացել այդ պաշտպանությանը: Նրանով, վոր մենք առաջինը կռվի նետվեցինք կա-

պիտալիզմի դեմ, մենք առաջինը հաստատեցինք բանվորական իշխանություն, մենք առաջինն սկսեցինք սոցիալիզմը կառուցել: Նրանով, վոր մենք կտրարում ենք այնպիսի գործ, վորը հաջողության դեպքում չուռ կտա ամբողջ աշխարհը և կաղամագրի ամբողջ բանվոր դասակարգը: Իսկ ի՞նչ ե պահանջմում հաջողության համար: Վերացնել մեր հետամնացությունը, դարձայնել շինարարության բարձր, բայլը կիյան տեմպ: Մենք պետք ե այնպես առաջ գնանք, վոր ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը, մեղ վրա նայելով, կարողանա ասել. «Ահա նա, իմ առաջավոր ջոկատը, ահա իմ հարվածային բրիգադը, իմ բանվորական իշխանությունը, ահա նա, իմ հայրենիքը,— նրանք իրենց գործը, մեր գործը, լավ են կատարում, — ողնենք նրանց՝ կապիտալիստների դեմ և հրահրենք համաշխարհային հեղափոխությունը»: Մենք պետք ե արդարացնենք բանվոր դասակարգի հույսերը, կատարենք մեր պարտավորությունները նրանց հանդեպ: Այսուհետեւ, պետք ե արդարացնենք, յեթե մենք չենք ուզում վերջիվերջո խայտառակվել:

Սրանք են ներքին և միջազգային մեր պարտավորությունները:

Դուք տեսնում եք, վոր այդ պարտավորությունները զարդացման բայլը կիյան տեմպ են թելադրում մեղ:

Յես չեմ ասում, վոր անտեսությունը զեկավարելու առարիդում այս տարիները մեղանում վոչինչ չի արվել: Արված ե, և նույնիսկ շատ բան: Մենք, մինչպատերազմյանի հետ համեմատած, արդյունաբերության արտադրանքը կրկնապատկեցինք: Մենք ստեղծեցինք ամենախոշոր գյուղատնտեսական արտադրությունն աշխարհում: Սակայն մենք ավելի գործ կտրարած կլինելինք, յեթե այդ ժամանակամիջոցում աշխատեյինք իրոք տիրապետել արդյունաբերությանը, նրա տեխնիկային, նրա ֆինանսական-տնտեսական կողմին:

Առ առավելն տաս տարում մենք պետք ե կտրենք այն տարածությունը, վորով հետ ենք մնացել կապիտալիզմի ա-

ռաջավոր յերկրներից։ Դրա համար մեզանում կան բոլոր «որյեկտիվ» հնարավորությունները։ Պակասում ե միայն այդ հնարավորություններն իսկապես ոգտագործելու հըմտությունը։ Իսկ այդ կախված ե մեղանից և մի՛միայն մեզանից։ Ժամանակն ե, վոր մենք սովորենք ոգտագործել այդ հնարավորությունները։ Ժամանակն ե, վոր մենք վերջանք արտադրությանը չմիջամտելու նեխած դիրքավորման։ Ժամանակն ե յուրացնել մի ուրիշ, ներկա շրջանին համապատասխան, նոր դիրքավորում՝ միջամտել ամեն բանի։ Յեթե դու դորձերին, վոչինչ բաց մի թող, սովորիր և կրկին աւգամ սովորիր։ Բայց եկիները պետք ե տիրապետեն տեխնիկային։ Ժամանակն ե, վոր բայց եվիկիներն իրենք մասնագետներ դառնան։ Վերակառուցման շրջանում տեխնիկան լուծում ե ամեն ինչ։ Յեվ տեխնիկան ուսումնասիրել չցանկացող, տեխնիկային տիրապետել չցանկացող տնտեսավարն անելուոտ ե և վոչ տնտեսավար։

Ասում են, թե դժվար ե տիրապետել տեխնիկային։ Ճիշտ չե։ Զկան այնպիսի բերդեր, վոր չկարողանան նվաճել բայց եվիկիները։ Մենք լուծել ենք մի շարք ամենադժվար խնդիրներ։ Մենք տապալեցինք կապիտալիզմը։ Մենք գրավեցինք իշխանությունը։ Մենք կառուցեցինք խոշորագույն սոցիալիստական ինդուստրիան։ Մենք միջակ դյառշացուն շրջեցինք դեպի սոցիալիզմի ուղին։ Շինարարության տեսակետից ամենակարևորը մենք արդեն արել ենք։ Մեղ քիչ բան ե մնում՝ ուսումնասիրել տեխնիկան, տիրապետել գիտությունը։ Յեվ յերբ այդ անենք, մեզանում կլինեն այնպիսի տեմպեր, վորոնց մասին չենք ել համարձակվում յերաղել հիմտ։ Յեվ մենք կանենք այդ, յեթե ցանկանանաք այդ իսկապես։



ՀՀ Ազգային գրադարան

NL0944494

1932р
шт. 5 № 9. (1/2 л.)

1932р

л. 92

3069



И. СТАЛИН

О ЗАДАЧАХ ХОЗЯЙСТВЕННИКОВ

Госиздат ССР Армении
Эреван—1932